

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅՐԵՆԻՔ. — Ամօքալ Նոյեմբերին իր առաջին տասնամակն կողմից այս ամսագիրը որ փերջին տասնամակնի գաղութահայ գրականության ամենէն փայլուն ասպարէզն եղաւ։ Ամոր ծնունդը Հայաստանի Գաղութական կառավարութեան անկումին յաջորդեց։ և անշուշտ այդ պարագան էր որ ամոր դիտումը կը ընդունէր անդրանիկ թիւով (1922 Նոյեմբ.) «Ներկայ հայ սերունդին համար չի կայ աւելի մեծ նպատակ մը, քան է հայկական անկախ պետութեան ըստեղծումը։ Այս հիմնական նպատակին է որ պիտի ծառայէ եւ մեր ամսագիրը»։

Բայց ըսել թէ «Հայրենիք» զուտ քաղաքական ձգտումներ ունի՝ ուղիղ չէ կարծեմ, ինչպէս ծայրայեղ է այն վճիռը թէ պարզապէս ռոմանթիք գրականութիւն մ'է որ մոռնալը մշակուի։

Տասնամակնին առթիւ շատ բան գրուեցաւ այդ մասին, յայտարարելով թէ ինչպէս ամէն ամսագրի «Հայրենիք» զիջաւոր նպատակն է մշակութային ծառայութիւն... ապա բնական է որ մա պիտի ունենայ լայն ճակատ, կ'ըսէ խոնդկարեան, ինչպէս «Յուսարիք» ալ թէ «Ներքեր խստորէն կուսակցական չղարծաւ»։ Եւ «Հայրենիք» գրական ուղղութիւն ալ չունեցաւ, այսինքն յատուկ զարոյց։ Ինչ որ առաւելութիւն պէտք է նկատուի։

Համեստ չափերով սկսուած — 64 էջ — պրակները քաղաքական թով գրական փոքր բաժին մը որ արագորեցին։ Բայց տարի չանցաւ երբ ան ըստուարացաւ, հսկայացաւ, երբեմն մինչեւ 200 էջ մոց պատկանելի հատոր մը, և քաղաքական չափաւոր բաժնին թով տուաւ գրական գրեթէ բոլոր ճիւղերն ու զոյգաւոր թատերական, միպական, քերթողական եւ գրական վերլուծումներ մեր հին ու մոր գրողներէն, փորձ ու պատկանելիներէն մինչեւ մոլորներ, որոնց մէջ ցայտուն եւ տաղանդաւորն թով դժբախտաբար կամ գրական արուեստի հիմնական ըմբռնումներուն եւ չափերուն զրոյցներ։

Համբաժանօթ մեր լուսագոյն գրողներն եղան որ այնքան հմայք ստեղծեցին այդ թերթին շուրջ, ինչպէս Ն. Շանթ իր թատերական էջերով, յետոյ Շիրվանզադէ, Խաչատուրեան իր «Ռուստա Կարօ»-յով, Ահարոնեան իր հայրենաշունչ զրուակներով, Օշական իր ուժեղ վերլուծումներով, և իր հետ Սիրունի, Ա. Մեան, Եւն. որոնց թով կարելի չէ մոռնալ Դմտրայի ամփոփ տեսութիւնները։

Ասոնց վրայ հետգրեալ աւելցան աւելի կամ մոտաւ չափով տաղանդաւոր գրիչներ, Համեստեղ, Գ. Զարեան, Վ. Շուշանեան, Սոս. Գալի, Ռէն, Զիթունի, ինչպէս Ն. Ներսիսեան և Յ. Ասպետ իրենց տաքուկ էջերով և սրտով։

Քաղաքական-կուսակցական-քննարկական բաժնին մէջ կը գրեն Գաղութականութեան ծանօթ հին դէմքերը՝ Վաղեան, Վրանեան, Խաչատուրեան, Վ. Նաւասարդեան և զին շատեր։

Արսէն Ներկաթ, Վ. Սօֆեան հոն կ'երգեն կեանք ու ցաւ, ինչպէս բոլորովին մոր մը, Արամայիս Սրապեան՝ որ շատ բան կը խոստանայ։

Միմասեան, Աղոնց պատմական ուսումնասիրութիւններ տուին, ինչպէս Զարեան՝ որուն էջերը այնքան հետաքրքրական թէ եւ քննադատելի և ուղղելի շատ կէտերով, մանաւանդ մեր ամուսնու կապուած մեծ հարցի մասին։

Յամբագութիւն է հոս մոյմիսկ ամփոփ պատկերը տալ այդ տասնամակն հսկայ մատենադարանին։ Կապիտալները կրնան իրենց առաջնորդ ունենալ Ա. Արիսեանի կազմած «Ներկայի ցանկը» մոյմ «Հայրենիք» թերթի 1933ի Յունուարի թիւին մէջ (ԺԱ տարի, թ. 3, էջ 161-176)։ Ընթերցողը հոն պիտի ճանչնայ մոր ու հին գրողները և երբեմն լսէ առանց գայթակղելու մեր արդի գրականութեան արժէքն ու նկարագիրը։

«Այսօրուսն սերունդը կը լրագրէ, այո՛ւ, Այսինքն կ'աշխատի օրաթերթին համար։ Օրագրութիւնը, անկասկած կը շահէ առկէ, բայց գրականութիւնը կը տուժէ։ Եւ չարաչար։ Հրապարակագրութեան հոտ կու գայ մեր գրականութեան... Ռեբէ Բան չեն ընէր մեր նորերը հիմա։ Աւելի աղմուկ և նուազ քրտինք, նուազ ստեղծագործութիւն։ Ահա ինչ որ տուին անոնք»։ Ահա ինչ որ կ'ըսէր Օշական։ Ահա ինչ որ մեծք ալ ըսինք։ Ասոնք «Յառաջ» ի ուշադրութեան կը յանձնենք Գ. Նգատեանի կողմէ որ կ'երգուն թէ անկեղծօրէն կը խօսի։ «Պղատունը կը սիրենք, բայց ճշմարտութիւնը՝ աւելի» («Հայրենիք»)։

ՆՈՅՆԱՐԵՐ 1932. — ԺԱ տարւոյն Ա. պրակն է, բոլորած տասնամակնի խրոխտ և ուրախ վերլուծումով, հոն Ե. Գասպարեան «Շաւիթում»ով փորձած է թատերախաղի վերածել ծանօթ աւանդալէպը։ Այսպիսի ժողովրդական դիւցազնական գործի մը համար հարկ էր պատմական միջավայրի և տիպարներու հարազատ վերակերտումին թով դնել մասն դիւցազնական շունչ դասական գծերով։ Ինչ որ պակասած է հեղինակին և գործը կը մնայ տկար։

Համաստեղի «Մալիտակ Զի»-ն և Գ. Զարեանի «Բանկոօպը և Մամուլի ոսկորներ»-ն աւարտին սպասեմք։

Ցիրուցան քերթուածներուն մէջ, որոնցմէ ումանք շատ անկատար եւ անհոգի՝ Ա. Սրապեանի «Նսթէրին» ու «Պատանի հո» գուգեակը սիրոյ և աւելի կենդանութիւն ունի, համբերձ լեզուի և արուեստի մաքուր գծերով։ Ս. Մեակուն ալ իր վահագնեան «Գեղօմ»-ին մէջ քերթողի շունչ կը ցուցնէ։

Մ. Պարսամեան «Գրական-գեղարուեստական» որոնումներով կը ջանայ հիմներ և մոլորելու հոգեբանութիւնները պարզել, ճշդել և մեղմել ծայրայեղութիւնները։ Վերջապէս օգտակար դասեր են հին ու մոր գրողներու յարաբերութիւնները բարելաւելու այս յեղափոխական շրջանին։

Զանց կ'ընենք ծանրաբալ ուրիշ կարգ մը յոդուածներու վրայ, ինչպէս են՝ Խաչատուրեանի «Քաղաքապետի մը յիշատակները», Ա. Գիւլիանդեանի «Հայ թաթարական ընդհարումները Բագուի մէջ» և այլ եթերօրդական փոքրիկ միւլթեր։

ԳԵԿՏԵՄԲԵՐ 1932. Տարւ ԺԱ. Թիւ 2. — Ա. Սարվազեան կու տայ թատերական գործ մը «Տա-

րերքի ընդլզում» որ հայ կեանքի մէկ ցայտուն և տխուր էջին ցուցադրութիւնն է։ այսինքն թէ ինչպէս խառն ամուսնութիւնները կը խանգարեն ու կը թունաւորեն ընտանեկան կեանքը և հոսկ հեղերական վախճանի մը կը յանգին։ Սարվազեան հոգեբանօրէն լուծելով հարցը՝ հիմնական պատճառը ցեղային նկարագրին կ'ընծայէ, ինչ որ ստոյգ է։ Տխուրն այն է որ արտասահմանեան հայ երիտասարդութիւնը երբեք չէ ուզած ըմբռնել աղէտը՝ որուն զոհերը շատ են, չըսելու համար ամէնքը, Իրաւունք ունի Մ. Վրոյր Սարվազեանի էջերէն յուզուելու և ամոնց ըմբերթերցումն յանձնարարելու հայ երիտասարդին։

Ն. Պէշեքթաշեան «Հայկական Բիւզանդիզմ»-ով ուզած է վէպ մը տալ, որ սակայն ոչ կեղծում ունի կարծես և ոչ համոզոյց։ Ան բնին վրայ կը մերկայացնէ կրօնական ու ազգային հակադիր դէմքեր ու դէպքեր։ Ետոյ անիմանալի ազդեցումներ Մկրտիչ Պէշեքթաշեանէն։ Բայց թէ ինչ է հեղինակին դիտումը՝ որոշ չէ։ Ժողովրդին կամ կամ միւսը, թէ՛ պարզապէս ամբողջ հրաւիրել իր գիւտին, թէ՛ անոնցմէ բարեխղճներ ակնհայտ գոցած պիտի փախչին լսելով ամառը և աղտոտ հայհոյութիւններ, որոնք մասն կը դառնան թերթի մը նպատակին, ինչպէս շատ անգամ ըսինք, որ է հայ միտքն ու սիրտը կրթել, ազնուացնել և բարձրացնել։ Զենք խօսիք խենթ և անբարոյ տիպարներուն վրայ որոնցմով թխած է իր վիպական բնմը։

Ա. Ահարոնեանի «Մեծ գուլումի գիրքը», այսինքն Առաքել Գալիթեցիի գործը, մեր հայկական ամբիշխանութեան շրջանի պատմութիւնն է արիւնոտ էջերով։ Ահարոնեան քայլ առ քայլ կը հետեւի պատմութեան, մասնաւորապէս Զուղայի հայերն ու ընդհանրութիւն Շահ Աբասի ձեռքով։ Եւ Ահարոնեան մեր ժողովրդեան ու հայրենիքի մասը կը տեսնէ արտագաղթի մէջ։ Ու վայ կը կարգաւորուի որ հայրենի հողը կը թողուն «բարեբաւ» տիկ վիճակ գտնելու յոյսով» և կը վերջացնէ մշանակալից խօսքերով։ «Հարկ է գորացնել հայրենիքը ինչ քաղաքական պայմաններում, ինչ ընթացքով և ինչով»։ ու դէպ ի հայրենիք վերադարձը պէտք է դառնայ ամենօրեայ տիրական մտածութիւն «որպէս ամէն առաւօտու աղօթքը, և ամէն գիշերի մեր երազը»։

Իրազեկի «Մի էջ հայ — ուսական յարաբերութիւններից» մեծ Պետրոսի օրերուն, իսկապէս հետաքրքրական է Գ. Նգատեանի համաձայն երկին հետ։

Մ. Տէրպետեան իր «Դսլամը և Հայերը» շարունակաւ գործին մէջ մասն լաւ կը նկարագրէ սուտ մարգարէն իր խենթ բարքով, և յետոյ կ'անցնի Ղուրանին։ Խմանում և ճիշտ ուսումնասիրութիւն մըն է։

Տաթեւացիէն բերած փաստերը իրենց իմաստն և արժէքն ունին, սակայն ի գուր ջանացած է երկար բաղդատել Աւետարան ու Ղուրան, քանի որ վերջինս Աւետարանէն է առած շատ բան և պարզապէս այլանդակելով փոխած։

Տէրպետեան իր ուսումնասիրութեան ընթացքին երբեմն ծանրապէս կը սայթաքէ մեր քրիստոնէական կրօնքի յայտնեալ ամսխալ ճշմարտութեանց հանդէպ։ «Մահմետականութիւնը... ամուսնութիւնը պարտականութիւն մը կը համարէ

Միւսլիմանին համար, մինչդեռ քրիստոնէութիւնը զայն կը նկատէ որպէս ամուսնափոխ չարիք մը»։ Կը զարմանաւ թէ ինչպէս կ'ամգիտանայ պատկի Ս. Խորհուրդը, քահանայով, խաչով, աւետարանով Աստուծոյ տաճարին մէջ կատարուած։

Յետոյ, մոյմալէս ամեներկի է Պ. Տէրպետեանի՝ Ղուրանին քով դնել մեր Ս. Աւետարաններն և ըսել թէ «Ղուրանն այնչափ պատասխանատու է մահմետականներու վայրագութեանց, որչափ Աւետարանը՝ Սպանիական հաւատաքննական խաբոյկներուն...»։

Սպանիացիներու մտածելակերպին ու սեւ աւարքներուն ոչ մէկ արդարացում կայ Աւետարանին մէջ։ մոլորեալն ու եկեղեցիէն ապստամբը կը նկատուին որպէս հեթանոս։ Բայց երբեք ակնարկ չկայ միւլթական պատիժի, որպէս Պօղոս Առաքեալ ալ պարզապէս կը հրամայէր մզովել, և այլ ոչինչ։

Զենք ծանրաբան Մ. Պէրպետեանի «Նիւնի»-ին վրայ, ուր չափափոխած նկարագրականներ կան. ասոր և այլ մախորդ թիւերու երեցածներուն մէջ լեզուի խմամբը կը պակսի. բառական օտարասիրութիւն մը որ մարդասիրութիւն չէ։

ՅՈՒՆԻՍԻՐ 1933. ԺԱ տարի, Բ. 3 (123). — Այս թիւը կը բացուի Ս. Փանոսեանի «Ներքով» որ յուշերու և վերլուծումներու տիրաւոր շարք մ'է մահմետներին «Գուն անցար, հերոս — Գէհ, համգիստ քեզ քուն» երգով։

Ն. Պէշեքթաշեան, Գ. Զարեան և Համաստեղ կը շարունակեն իրենց գործերը։

Մ. Տէրպետեան «Դսլամը և Հայերը»-ով Մահմետի և Ղուրանի ընթերցումն վերջ խմանում ուսումնասիրութեամբ խալիֆայութիւնն է որ կը ցուցադրէ և ամոր աշխարհակալութիւնները, որով և Հայաստանի գրաւումը արիւնի տեսարաններով (700ին) և ոստիկաններու շրջան, հոսկ Բագրատունեաց սկիզբը։

Ս. Գիւլիանդեան կը շարունակէ «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ»։ ինչպէս խաչատուրեան իր «Քաղաքապետի մը յիշատակները»։ Իսկ միջազգային տնտեսագէտներու մէջ մեր երեւելի հայ տնտեսագէտ Պրոֆ. Տոտումեանց կու տայ տեղեկատուութիւն մը «Գիտական-Գասալ» խօսակամ պտոյտներ Համագործակցական Բուլկաքիոյ մէջ 1932ի զարմանք։ Ն. Խաչատուրեան վերլուծում մը փորձած է «Ռուրէն Որբերեան»-ի կեանքին ու գործին։ ինչպէս Յ. Զարեան «Յովհաննէս Խան Մասնահան»-ի որպէս տիպար ու Շէյքսպիրի թարգմանիչ։

Այս թիւին մէջ է «Գալիթ և Մհեր»-ը գոր գրի առած է Հայրապետ Յ. Համամեան, անշուշտ իր արժէքն ունի ծանօթ վէպի ուսումնասիրութեան համար։ հրատարակութիւնը կը պարտինք Գ. Մասունիի որ Գեղամի գործերուն մէջէն է գտած։

Քերթուածներուն մէջ կ'արժէ յիշել Ա. Սրապեանի հուժկու բայց յոռետես «Տրտումը» և Վ. Սօֆեանի գողտրեկ «Գիւղը» Համաստեղի մուլթուած։

Պրակը կ'աւարտի «Հայ կեանք»-ի Աթանի և Մ. Օ. Ի ամսական տեսութիւններով, վերջն ունենալով, ինչպէս յիշեցինք, «Հայրենիք»-ի տասնամակն միւլթերու ցանկը։

Հ. Ե. Փ.